

**ԺԱՄԱՆԱԿԻ ԱՐԺԵԼ**  
(Թարգմանութիւն)

Մենք ժամանակը գործ ածել չգիտենք։ Մէկը շատ  
սիրուն ասել է. «Դեռ ևս չի ծնուել մի մարդ, որ կարու-  
զանար գնահատել իւր կեանքի ամեն մի ժամը, ինչպէս  
հարկն է»։ Մենք՝ իբրև անփորձ պատանի, թեթևամտա-  
բար վատնում ենք ոսկի ժամանակը, կարծելով թէ գա-  
մի անսպառ գանձ է և երբէք չի հատնիլ։ Մենք կեանքի  
ոկղըի և վախճանի վրայ նայում ենք ինչպէս հեռադիտակի  
միջով, որ մի կողմից մեծացնում ու մօտեցնում է առար-  
կաները, իսկ միւս կողմից՝ փոքրացնում ու հեռացնում-  
երը նայում ենք կեանքի ոկղըի վրայ, մեզ մօտիկ է երե-  
ւում. իսկ երբ նայում ենք վախճանի վրայ՝ հեռու, Բատ  
սաղմոսի «մեր օրերի թիւը եօթանասուն տարի է, աւելի  
ամրակազմներինը՝ ութսուն»։ Շատերի կեանքի համար  
այդ նոյն իսկ մի չափազանց առատ սահման է։ Մեզնից  
շատերը մեռնում են նոյն իսկ յիսունին չհասած։ Սակայն  
ենթադրենք, թէ մենք ամենքս կարող ենք մինչև եօթա-  
նասուն տարին ապրել։ Այդ է ընդամենը մեր ժամանակի  
պաշարը, մեր կեանքի դրամագլուխը, որը, սակայն, տո-  
կոս չի բերում, հետզետէ չի աճում, այլ շարունակ պա-  
կառում ու նուազում է։ Մենք ծախսում ենք բուն դրա-  
մագլուխը։

Եթէ մենք տասնեվեց հազար ոռոքլի ունենայինք,  
այդ կարող էինք համարել մի լաւ դրամագլուխ, բայց եթէ  
այդ փողերի վրայ մի բան աւելացնելու հնար չունենք,  
այլ ստիպուած ենք ծախսել դրամագլուխը և դեռ կէսն  
էլ պարոքեր վճարել, այն ժամանակ պէտք է շատ մեծ  
խնայողութեամբ գործածել մնացած կէուը ձիչտ այդպէս  
էլ անհրաժեշտ է խնայողութեամբ գործ ածել ժամանակը։  
Սենեկա իմաստունն ասել է. «Ժամանակի նկատմամբ խը»

նայող լինելը առաքինութիւն է»։ Զկայ աւելի թանկագին դանձ, քան ժամանակը և աւելի մեծ կորուստ, քան ժամանակի կորուստը։ Անօդուտ կերպով կորցրած ժամանակի մասին իրաւամբ կարելի էր այսպիսի յայտարարութիւն տպել. «Արել ծագելուց մինչև մայր մտնելը կորել են մի քանի ոսկէ ժամեր, նրանցից իւրաքանչիւրը զարդարուած է վաթասուն ագամանդեայ բռպէներով», սակայն, դժբախտաբար, բոլոր որոնումներն անօդուտ կը լինէին. քանի որ այդ կորուստը անգառնալի է»։

Ամեն ինչ կարելի է յետ դարձնել, բացի ժամանակից։ Կարելի է կրկին ձեռք բերել կորցրած հարստութիւնը, վերականգնել խզուած բարեկամութիւնը, հնարաւոր է նոյն իսկ վերականգնել արաւաւորուած բարի անունը, ժամանակը սակայն ոչ մի կերպ յետ դարձնել չի կարելի։ Անցկացող ամեն մի բռպէի հետ հետզհետէ կարճանում է և մեր կեանքի թելը։ Այսօրուայ օրը, որ արեի մայր մըտնելովը վերջանում է, այլ ևս երբէք յետ չի դառնալ։ Արել կրկին ու կրկին կը ծագի ու մայր կը մտնի, սակայն այդ արդէն նոր օրեր կը լինին. անցածը մի անգառնալի կորուստ է մեր կեանքի դրամագլխից։ Բայց մենք միջոց ունենք երկարացնելու մեր կեանքը»։

Աշխատանքով ու նշանաւոր դեպքերով լի կեանքը աւելի երկար է թւում, քան առաջուկ, միօրինակ կեանքը։ Պարապութեան մէջ առանձին ժամերը երկար են թւում. բայց այդպէս անցկացրած կեանքը, երբ յետ ես նայում, շատ կարծ է երեւում, որովհետեւ յիշելու ոչինչ չկայ։ Իսկ եռանդուն գործունէութիւնը, արդիւնաւոր աշխատանքը ամեն մի օրն իսկ աչքի ընկնող ու նկատելի է դարձնում։

Երբ մարդ յիշում է, թէ ինչ արաւ երկրի վրայ Քրիստոս իւր քարոզութեամբ երեք տարուայ ընթացքում, թւում է, թէ նորու գործունէութիւնը տասնետկ տարիներ է տևել։ Պօղոս առաքեալը, որ իւր քարոզչական բազմարդիւն գործունէութեամբ շրջել է այն ժամանակի աշխարհի համարեան թէ կեսը, կարծես, Ամենապաղպայից ել

աւելի է ապրել։ Այն կեանքը, որի ամեն մի օրը, ամեն մի ժամը լի է աշխատանքով, շատ երկար է թւուժ։

Եթէ ժամանակը յիրաւի մի դանձէ, անհրաժեշտ է պահպանել այն ժամանակի պահպանութեան կանոնները նոյնն են, ինչ որ դրամինը։ Պէտք է պահպանել ժամանակը գողերից։ Մեզնից ժամանակ շատ է գողացւուժ։ Ժամանակի մի մասն ամեն օր մեզնից յաճախ յափշտակում է քրունը։ Քնելու համար գործածած 7—8 ժամը անհրաժեշտ է, այդ մեր պարտըն է յափնած մարմնի նկատմամբ։ Թակայն որքան յաճախ մարդիկ քնում են օրը 9—10, ոսյն իսկ 12 ժամ։ Աւելորդ ժամերը յափշտակում է մեզնից քսւնը։

Մեզ իողոպատղներից մէկն էլ ծուլութիւնն է։ Դործը հօ չի փախչում, առում ենք մենք—ի հարկէ գործը չի փախչում, իսկ ժամանակը . . . Զէ որ նոր փախչում է և ոչ մի ուժով չի կարելի կանգնեցնել և յետ քերել։ Երաշը մի յետածդիր վաղուան այն, ինչ որ պէտք է անել այսօր։ Վաղն ունի իւր դործը, իւր զբաղմունքը, իւր պարտականութիւնները։

Երբէք անգործ մի մերակ։ Շատ ծանր է անգործ մարդուննելը։ Ո՞րքան գործ կայ անելու ամեն տեղ. ո՞րքան եռանդուն ու գործունեայ մշակներ են պէտք, իսկ մարդիկ պարապ անց են կացնում իրենց ժամանակը ու ձանձրոյթից տառապում։ Միթէ կեանքը այնպէս վատ կը լինէր, ինչպէս այժմ, եթէ ամեն մի մարդ որ և է բարի, խելացի, հանրօգուտ գործ կատարէր։ Ո՞րքան մարդկային ուժեր ու ընդունակութիւններ, որքան բարի զգացմունքներ ու ձգտումներ են կօրչում ի զուր տեղը։

Ես կարծում եմ, այս աշխարհում ամենախզալին այն պարապ մարդն է, որ շարունակ առում է. ինչ անեմ, ինչ պէս թէ՝ ինչ անեմ, Քանի քանի տեսակ գործեր կան մեր շուրջը։ Աշխատել չգիտէք, Սովորեցէք, կարդացէք, մտածեցէք, կեանքի մէջ մտէք։ Աշխատանքի համար նախապատրաստուելն էլ հէնց մի աշխատանք է։ Պաշտպանեցէք ձեր դանձը՝ ժամանակը գործեցից, ծուլութիւնից,

անդործութիւնից, երկար քնից»

Ժամանակի պահպանութեան երկրորդ կանոնն է, «Ժամանակն ի զուր տեղը չկորցնել, չվատնել» Մենք սարսափելի կերպով վատնում ենք ժամանակը, Մենք չենք գնահատում ժամանակի մնացորդները, փշրանքները, ինչպէս որ չենք գնահատում առանձին կոպէկները, Մեծ դրամը մենք խնայում ենք, յաճախ այս առարկութեամբ. «Ես չեմ ուզում մեծ փողը մանրել, հէնց որ մանրում ես, իսկոյն ձեռքից դուրս է դալիս», իսկ մանք փողը հեշտութեամբ ծախսում ենք, իբր թէ այդ նոյն փողը չէ. Այդպէս է և ժամանակը. Ամեն մի ազատ քառորդ ժամը փոքր արժողութեամբ մի դրամ է. մի ծախսէք այդ ի զուր տեղը. Այդ, իբր թէ անպէտք, ըստեները կարող են շատ և շատ պէտք դալ, Մի բազմազբազ դիտնական բժիշկ մի քանի գիտական գրքեր է զրել մատիտով փոքրիկ թերթիկների վրայ հիւանդներին այցելութեան գնալիս կառքի մէջ. Հինգ հազարին կերակրելուց յետոյ, Փրկիչն ասաց. «Ժողովեցէք մնացած փշրանքները, որպէս զի ոչինչ չկորչի»: (Յովհ. Զ, 12):

Ժամանակը վատնելու մի ուրիշ տեսակն էլ այն է, որ մենք արժան իրի համար թանկ դին ենք վճարում. Իրն արժէ մի ուռելի, մենք վճարում ենք 5—10 ուռելի: Կան որոշ բաներ, որոնց համար առ առաւելը կարելի էր գործ ածել շաբաթն 2—3 ժամ, այն ինչ մենք ամբողջ օրեր ենք գործ գնում: Օրինակ, մեր բազմատեսակ զուարծութիւնները, որքան ժամանակ ենք նուիրում նրանց: Ոչ ոք, ի հարկէ, չի ասիլ, թէ երբէք ոչ մի զուարծութիւն հարկաւոր չէ: Լաւ և խելացի զուարծութիւնները, բարեկանների հետ ունեցած հաճելի զրուցատրութիւնները, զբուանքները միշտ օդտակար են, դրանք նոյնն են, ինչ որ համեմունքը կերակրի համար, բայց հօ չի կարելի ամբողջ ճաշը միմիայն համեմունքներից պատրաստել. նոյնպէս և չի կարելի ժամանակի մեծագոյն ժամը զուարծութիւնների նուիրել:

Աստուած մեզ մեծ գործ է յանձնել: Նա մեզ ու

զարկել է աշխարհ, մեզ տուել է կեանք, ընդունակութիւն, ոյժ, որպէս զի մենք նորա թագաւորութիւնը հաստատելու գործին ծառայենք։ Աստուծոյ գործը մեզ սպասում է, իսկ ժամանակն անդարձ կերպով անցնում գնում է։ «Ուշք դարձրէք, որ ուղղութեամբ ընթանաք, ոչ որպէս անմիտներ, այլ որպէս իմաստուններ։ գնահատեցէք ժամանակը, որովհետեւ օրերը չար են» (Եփես. Ե, 15—16)։

### Սամբռէ վարդապետ.

## Մ Ա Յ Թ Ա Յ Թ Ո Ւ Թ

Նուխուց փոխագրուեցաւ Ալսալցխտ փոխանորդական պաշտօնով տ. Սիօն վարդապետը։

Մայր Աթոռս վերագարձան շնորհունակ երուանդ և Ներսէս սարկաւագները, որոնք սովորում էին գերմանիայում։ Երուանդ սարկաւագն իրեն դիսերտացիայի համար նիւթ էր ընտրել «Հայոց և Ասորոց եկեղեցիների յարաբերութիւնները», որն առանձին գրքով լոյս է տեսել։ Շնորհունակ սարկաւագն այդ աշխատութեան համար արժանացած է Լիցէնցիատ պատուանուան։